№ 38 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 1 1889 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 1 № 38

ՏԱՍՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլ, կէս տարվանը 6 բուբլ։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են Իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Հանդուցեալ Ստեփաննոս Պալասանեանի այրին՝ ՆԱՏԱԼԻԱ ԵՍԱՅԵԱՆ, *և դուստրը՝* ԾԱՂԻԿ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ ՊԱԼԱՍԱՆԵԱՆՆԵՐԸ *յայտնում են որ ապրիլի 1-ին, շաբաթ օրը ս. պատարագից յետոյ Վանքի մայր եկեղեցում, կատարվելու է* ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆԻ *քառասնօրեայ հոգեհանդիսաը, ուստի խնդրում են ազգականներին, բարեկամներին և յարգողներին ներկայ գտնվելով, յարգել հանդուցեալի յիշատակը։* 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Հայեր և վրացիք.—*ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Վաղվայ ժողովը. Նամակ Մոսկվայից. Նամակ Ախալքալաքից. Նամակ Երևանից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.—*ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. *Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. —*ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՀԱՑԵՐ ԵՒ ՎՐԱՑԻՔ

—

Ամենալաւ ապացոյց, որ մամուլը մեզանում դեռ ևս չէ կարող անմիջական ներգործութիւն ունենալ հասարակական ընթացիկ հարցերի վրա, չէ կարող գործնական ուղղութիւն տալ այդ հարցերին, անկարող է որ և է դրական ազդեցութիւն ունենալ ժամանակակից հասարակութեան և ներկայ սերունդի վրա, քանի որ մեր հասարակութեան ներկայ սերունդը դեռ ևս անպատրաստ է ընդունել մամուլի յայտնած գաղափարները,—այն է, որ տասն և եօթ տարի շարունակ քարոզած օգտաւէտ գաղափարները մինչև այժմ ոչ թէ միայն չեն սկսել իրագործվել հասարակութեան մէջ, բայց այդ գաղափարների ճշմարտութիւնն ու օգտաւէտութիւնը նոր են սկսում ըմբռնել հասարակութեան մի խումբ առաջադէմ մարդիկ։

„Մշակի“ գոյութեան առաջին տարվանից սկսած մենք այն միտքն էինք յայտնում թէ Անդրկովկասի մէջ բնակվող բոլոր ազգութիւնները՝ հայեր, վրացիք և թուրքեր, կապված լինելով մի և նոյն երկրի շահերի հետ, ունենալով մի և նոյն բարոյական, հասարակական և տնտեսական շահեր, պէտք է միմեանց փոխադարձապէս ուսումնասիրեն, պէտք է իրար մէջ համերաշխ լինեն, պէտք է հասկանան թէ իրանց բոլոր ինտերէսները ընդհանուր են, թէ այն, ինչ որ օգտաւէտ է մինին,—օգտաւէտ է և միւսներին, ինչ որ վնասակար է մինին,—վնասակար պիտի համարվի և մնացածներին։

Անցաւ տարիների մի շարք,—և այդ օգտաւէտ մտքերի ոչինչ հետևանք, ոչինչ արդիւնք չը տեսանք մեր գործնական կեանքում։ Այդ այն պատճառով է, որ մեր երկրի յիշեալ երեք ազգութիւնների ժամանակակից սերունդը դեռ ևս պատրաստ չէր ըմբռնել և իրագործել այդ գաղափարները։

Այդպիսով հաստատվում է դարձեալ այն փաստը, որ այն հասարակութեան մէջ, որը ինքն դեռ ևս անպատրաստ է ինքնագործունէութեան, անընդունակ է ինքնաճանաչութեան, մամուլը անկարող է գործնական անմիջական ազդեցութիւն ունենալ իրերի վիճակի վրա և մազի չափ անդամ փոխել այդ իրերի վիճակը, այլ պէտք է բաւականանայ միայն նրանով՝ որ կրթէ, դաստիարակէ, պատրաստէ ապագայ սերունդը ինքնաճանաչ լինելու և ինքնագործունէութեան ընդունակ դառնալու....

Եւ եթէ մամուլի խօսքը վերջ ի վերջոյ որ և է ազդեցութիւն պէտք է ունենայ հասարակութեան վրա,—նա սկզբից պէտք է ազդէ հասարակութեան լաւագոյն մասի վրա, նրա կրթված, ինտելիգէնտ դասակարգի վրա։ Նախ հասարակութեան այդ լաւագոյն, ինտելիգէնտ, բարոյապէս և մըտաւորապէս զարգացած մասը պէտք է ըմբռնէ նոր, օգտաւէտ, արդար գաղափարները և ջանայ նրանց իրագործել, իսկ ապա այդ նոյն գաղափարները կը կարողանան փոքր առ փոքր արմատներ բռնել և հասարակութեան մեծամասնութեան մէջ։

Այդ է պատճառը, որ մենք ուրախանում ենք, երբ տեղեկութիւն ենք ստանում մեր համալսարանական քաղաքներից, որ մեր կովկասեան ուսանողները, հայերը և վրացիները, սկսում են միմեանց մօտենալ, միմեանց փոխադարձաբար օգնել, միմեանց հասկանալ, նոյն իսկ միմեանց կեանքը, պատմութիւնն ու գրականութիւնը ուսումնասիրել, սկսում են, որպէս կովկասցիներ, մի և նոյն երկրի զաւակներ, իրար մէջ բարոյական, մտաւոր և նիւթական համերաշխութեան կապեր հաստատել։

Այս օրերս մենք ստացանք Մոսկվայից մի նամակ, որից տեղեկանում ենք թէ այդ համալսարանի հայ և վրաց ուսանողութիւնը ջանում է ոչնչացնել այն փոխադարձ խորթութիւնը, որը մինչև այժմ միշտ տիրում էր մի և նոյն երկրին պատկանող այդ երկու ցեղերի ներկայացուցիչների մէջ։

„Մշակի“ հետևեալ համարում մենք կաշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին յիշեալ նամակի հետ, իսկ այժմ մեր միակ նպատակն է դարձնել այս ուրախալի երևոյթի վրա թէ հայ և թէ վրաց հասարակութեան բարեմիտ և հասկացող դասակարգի ուշադրութիւնը, ցանկանալով որ նրանք էլ, իրանց կողմից, նպաստէին իրանց կարողութեան չափ այդ բարոյական և մըտաւոր համերաշխութեան գաղափարի հաստատելուն մի և նոյն երկրի երկու հարևան ցեղերի մէջ, որոնց փոխադարձ շահերը, թէ բարոյական, թէ մտաւոր, թէ հասարակական և թէ վերջապէս տնտեսական կէտից՝ կատարելապէս նոյն են և նոյն պէտք է լինեն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱՂՎԱՅ ԺՈՂՈՎԸ

—

Վաղը երեկոյեան ժողով է նշանակված։

Տպագրական ընկերութեան վարչութիւնը լեթարգիական քնից սթափվելով, որը համարեա երկու տարի տևեց, ընդհանուր ժողով է հրաւիրում ընկերութեան անդամներին։

Բայց ովքեր են և քանի հոգի են ընկերութեան անդամները,—ահա մի հարց, որը վարչութիւնը սրանից մի երկու ամիս առաջ, երբ ժողով նշանակեց, ուշադրութեան առնել չէր կարող, քանի որ այն ժամանակ ընկերութիւնը անդամներ չունէր. այո, անդամներ չունէր, եթէ չը հաշուենք խմբագրութեան և վարչութեան 14 անդամներին....

Մեր հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ այս վերջին օրերում ընկերութեան անդամ գրվողներ եղել են, եթէ ոչ շատ մեծ թիւով, դոնէ աւելի քան թէ նախորդ երկու տարին։

Եւ ահա այդ անդամները հրաւիրվում են վաղը, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճը, զբաղվելու ընկերութեան գործերով, որը իր նպատակով այնքան համակրելի, բայց իր ընթացքով նոյնքան հակակրելի է։

Անունով գոյութիւն ունեցող ընկերութեան գոյութիւն չունեցող վարչութիւնը ընդհանուր ժողով է հրաւիրում,—համաձայն յայտարարութեան,—քննելու ընկերութեան ունեցած չունեցածը, արած չարածը, հաստատելու այս տարվայ նախահաշիւը, և վերջապէս նոր անդամներ ընտրելու վարչութեան և խմբագրական մասնաժողովի համար։

Այդպիսով ուրեմն մի քանի ժամվայ ընթացքում կը ծանօթանանք այն ընկերութեան կեանքի հետ, որը թէև «նորութիւններ» բերելու համար է հիմնված, բայց «անշարժութեան» տիպար միայն հանդիսացաւ Թիֆլիսում, կամ ինչպէս ընդունված է ասել, հայոց մտաւոր կենտրոնում, Կովկասի հայ ինտելիգէնցիայի աթոռանիստ քաղաքում։

Առանց մարդարէ լինելու կարելի է գուշակել, որ եթէ վաղը քաղաքային դումայի դահլիճում մի սովորական տեղեկութիւն չը լսվի ընկերութեան անցեալի մասին, այնու ամենայնիւ բաւական շատ առիթ կը լինի խնդալու, որովհետև միջոց կը լինի տեսնել, թէ ինչպէս կարելի է անունով գոյութիւն ունենալ, բայց կեանք չունենալ, թէ ինչպէս կարելի է կանոնադրութիւն ունենալ, իսկ գործունէութիւն՝ ամենևին ոչ, մի խօսքով թէ ինչպէս կարելի է կենդանի լինել, բայց մեռած...

Այո, այդ բոլորը գուցէ տխրալի լինի, մանաւանդ որ տպագրական ընկերութիւնը վերին աստիճանի տխուր անցեալով ներկայանում է ճիշդ այն ժամանակ, երբ նրա տասնամեակն է լրացել, և երբ մեր «ազգասէրները» գուցէ պատրաստութիւններ պիտի տեսնէին տօնելու և այդ ընկերութեան տասնամեայ յոբելեանը, թէև յոբելեանի փոխարէն «հոգեհանդիստ» կատարելու աւելի իրաւունք և առիթ կայ....

Սակայն թողնենք հեղնութիւնը։ Ընկերութեանը մահվան դուռը հասցնողներին անկասկած հաճելի չի լինի «հոգեհանդիստ» բառը, թողնենք հեղնութիւնը, կրկնում ենք, որովհետև այդ ընկերութիւնը ոտի պէտք է կանգնեցնել, պէտք է նրան կեանք տալ, և հոգի ներշնչել։

Այդ ստեղծագործական գործը, հոգի ներշնչելը՝ հէնց վաղը պէտք է կատարվի։ Ում թանգ է Տպագրական ընկերութեան նպատակը, թող անաչառութեամբ վերաբերվի դէպի ընկերութեան անցեալը, և աշխատի նրա ապագան նոր, հաստատ հիմքերի վրա դնել, յանձնելով նրա գործերը հասկացող, եռանդուն և գործին տեղեակ մարդկանց ձեռքը....

Մենք հաւատացած ենք, որ վաղվայ ժողովը հայոց ընկերութիւնների քնաթաթախ ժողովներից մինը չի լինի, ուր սովորաբար լռութիւնը խելօքութիւն է համարվում, իսկ դիմակաւորվելը փորձառութեան նշան....

Ուրեմն թող ամենքը անկեղծօրէն, առանց կրքի, և առանց ինտրիգների աշխատեն լուծել Տպագրական ընկերութեան վերաբերեալ այս նշանաւոր հարցը՝ լինել թէ չը լինել....

*

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Մարտի 21-ին

Հայ ուսանողութեան մեծամասնութիւնը կազմում են չքաւորները. այս ճշմարտութիւնը կարոտ չէ երկար ու բարակ բացատրութիւնների։ Դեռ նորերումս «Մշակը» այս երևոյթի վրա ուշադրութիւն դարձրեց։ Շատերը այժմեան մեր հասարակական գործիչներից գուցէ շատ լաւ յիշում են իրանց ուսանողութեան ժամանակից այս տխուր իրողութիւնը. ով ուսանող է եղել, նա միայն կը հասկանայ թէ ինչ անաջող պայմանների մէջ է գրված հայ ուսանողութեան մեծամասնութիւնը նիւթականապէս, եթէ չը հաշուենք հիւսիսային կլիմայի քայքայող ազդեցութիւնը ընդհանրապէս կովկասցիների վրա։

Մեր ուսանողների այսպիսի ծանր դրութեան հետևանքը լինում է կորստաբեր թէ իրանց և թէ այն ծնողների համար, որոնց որդիք բաղդ են ունեցել ուսանող կոչվելու, և թէ հասարակութեան համար։ Մեր ձեռքի տակ ճիշդ թուականներ չունենք, որ ցոյց տանք, թէ Ռուսաստանում հայ ուսանողների՝ չքաւորութիւնից և անառողջ կլիմայից մեռնողների թիւը նրանց ընդհանուր թվի ինչ տոկոս է կազմում. բայց ով մի քանի տարի շարունակ կարդում է մեր պարբերական հրատարակութիւնները, նա մասնաւորապէս հակացողութիւն կունենայ այդ մասին. համարեա տարի չէ անցնում, որ մեր լրագիրները հայ ուսանողի վաղաժամ մահվան լուրը չը հրատարակեն։ Լինում են դէպքեր, որ ուսանողի խանդարված առողջութիւնը միանդամայն արգելք է լինում ուսման շարունակութեան և ստիպում է նրան կիսատ թողնել ուսումը և վերադառնալ հայրենիք։ Ընդհանրապէս հայ ուսանողը իր հաշիւը հիւսիսի հետ վերջացնելուց յետոյ վերադառնում է տուն.... շատ բանից զրկված. երիտասարդ ոյժերը արդէն քայքայվել են, երիտասարդական աշխոյժը, եռանդը մարել են, կամ մարելու վրա են։ Իդէալներով օգտվելու այլ ևս անընդունակ, նա հանգստութիւն է որոնում և աւելի հետաքրքրվում է գործնական կեանքով։ Հասարակութիւնը՝ այդ թուլամորթ արարածներից չէ կարող առողջ գործունէութիւն սպասել, ինչպէս նա չէ կարող սպասել և այն հարուստ ուսանողներից, որոնք օրօրոցից սկսած սովորել են անտարբերութեամբ վերաբերվել դէպի ամեն մի գաղափար։

Հարկաւոր է արդեօք բացատրել, որ պէտք է այս տխուր իրողութեան առաջն առնելու աշխատել, հարկաւոր է արդեօք ապացուցանել, որ պէտք է չքաւոր ուսանողի դրութիւնը ապահովել այնքան, որ նա կարողանայ պահպանել իր ոյժերի գոնէ այն քանակութիւնը, որ նրան թողնում են միջնակարգ ուսումնարանը ու անառողջ կլիման, որ այդ մնացած ոյժերը նա զոհ չը տայ կեանքի անբնական պայմաններին։

Պատիւ է բերում Ռուսաստանի հայ ուսանողութեան գոնէ այն բանը, որ նա կարողացել է իր միջից շատերին գոնէ մասամբ ազատել կատարելապէս ուժաթափ լինելուց. կատարելով այդպիսով այն պարտականութիւնը, որ դրված է հայ հասարակութեան և մասնաւորապէս բարեգործական ընկերութիւնների վրա։

Ամեն կերպ աշխատել, որ չքաւոր ուսանողը աւելի աջող պայմանների մէջ դրված լինի, այդ մեր հասարակութեան բարոյական պարտականութիւնն է, քանի որ նա պահանջում է ուսանողից իր շահերին ծառայել։ Հասարակութիւնը պահանջում է, որ բժիշկը թէ հարուստին և թէ աղքատին խղճմտաբար բժշկէ և իր գիտութիւնը փող կորզելու արհեստ չը դարձնէ, որ նա նպաստէ իր գիտութեամբ երկրի առողջապահական պայմանների զարգացման. փաստաբանից պահանջում է, որ նա հանդիսանայ ճշմարիտ իրաւունքի պաշտպան և ոչ չարլատան։ Բայց երբ այդ բժիշկն ու փաստաբանը ուսանող եղած ժամանակ սովից մեռնում էին, հասարակութիւնը «այնումն էլ չէր զցում»։ Այս այսպէս լինելուց յետոյ, դժուար է գտնել հասարակութեան և իր երիտասարդ ոյժերի մէջ մի բարոյական կապ, մի որ և է համերաշխութիւն։

Ի հարկէ, տգէտ հասարակութեան անտարբերութիւնը ոչոքին չէ ազատում իր պարտականութիւններից։ Հէնց ինքը ինտելիգենցիան հասարակութիւնից աւելի էլ մեղաւոր է այս հանգամանքում. ում աւելի է տուած, նրանից աւելի է պահանջվում. եթէ հասարակութիւնը տգէտ է ու չէ հասել այն աստիճանի գիտակցութեան, որ աշխատէ նիւթապէս ապահովել իր երիտասարդ ոյժերը, ինչ անուն տալ այն դիպլոմաւոր պարոններին, որոնք, բացի այն, որ իրանք եղել են

ուսանող և իրանց կոյր աչքով տեսել են այն անասելի աղքատութիւնը, որ տանում են չքաւոր հայ ուսանողները, իրանք դուցէ եղել են երբեմն նրանցից մէկը, օգտվել են ընկերների հաւաքած կօպէկներից և առանց խղճի խայթի բոլորը մոռացել են։ Եթէ հասարակութիւնը երախտիք չունէ և չէ ուզում ունենալ ուսման ձգտողների վրա, ուսանողութիւնը ինքն ունէ երախտիք չատերի վրա այն իւղալի պաշտօն ունեցողներից, որոնք հէնց նրա ջանքերով գուցէ աղատվել են հաստատ մահից և այժմ վայելում են կեանքի բարիքները։ Խռով կենան այդ բարիքները այդ ատելի ապերախտների գլխին. ատելի չեն արդեօք նրանք, որոնք եթէ վերադարձնէին գոնէ իրանց տուած նպաստները (չենք ուզում նրանց օգնութիւնը), կը կազմվեր մի պատկառելի գումար, որը իրական օգնութիւն կը լինէր չքաւոր ուսանողութեան համար։

Պատիւ և պատաւոր խօսք ասված բաները՝ բանի տեղ չը դնող այդ դիպլոմաւորները աջողել են իրանց «լաղթը» ցոյց տալ արտասահմանումն էլ, ինչպէս երևում է «Մշակի» № 22-ից։ Մարդ ստիպված է համաձայնել այն տխուր ճշմարտութեան հետ, որ հայը «ապերախտ է»... Ի դէպ է ասել, որ Մոսկվայում, որտեղ գլխաւորապէս խմբված է հայ ուսանողութիւնը, տարուց տարի պակասում է ուսանողներին նպաստման աղբիւրը. երբ լինում են ներկայացումներ կամ կօնցերտներ յօգուտ ուսանողների, տեղիս հայ հասարակութիւնը կամ խուսափում է տոմսակներ դնելուց, կամ շատ դժուարութեամբ համաձայնում է այդ մեծ բարերարութիւնն անել....

Դա շատ ցաւալի է, որովհետև այդ է միակ միջոցը, որով կարելի է լինում գոնէ մասամբ օգնել չքաւոր ուսանողներին։

Մ.

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Մարտի 24-ին

Գարուն է։ Եօթը երկար ամիսներ երկրի մակերևոյթը քօղարկող սպիտակ և սառն սաւանը աննկատելի կերպով, կարծես մի վայրկեանում, հրապուրիչ կանաչազարդ գորգերի փոխվեց։ Ամեն ոք ուրախ է գարնան գալուն, փոքրիկ և անլեզու երեխաներն անգամ գարունը աւետող սարեկի ներդաշնակ երգը լսելով, մի առանձին ուրախութիւն են արտայայտում և կարծես թէ գիտակցաբար զգում են տարվայ հրապուրիչ և ամենագեղեցիկ եղանակի գալը։ Գարնան գալու հետ առոյգ և զուարթ երկրագործն էլ սկսելու է իր վար ու ցանքը, սկսելու է իր գործունէութեան նոր տարեշրջանը։ Բայց աւա՛ղ։ Ախալքալաքի գաւառի աշխատասէր և անխոնջ երկրագործը՝ արտասուալից աչքերով, յուսահատ մտքերով և, ինչպէս ասում են, «ձեռքերը ծոցում» զիմաւորում է գարնան և գիտէք ինչու. որովհետև նա սերմնացու չունի, նա նոյն իսկ ուտելիք չունի։ Ամբողջ 5—6 տարի է, որ մեր գաւառի հացթոյսը չէ գալիս, ենթարկվելով պարբերաբար երբեմն վաղաժամ ցրտի, երբեմն կարկտի և երբեմն չորութեան պատահարներին։ Մի կողմից՝ բնութեան այս պատուհասները, իսկ միւս կողմից ապրուստի անհաշիւ լինելը, նորութեան շռայլութիւնները և ուրիշ շատ պատճառներ, այսօր հասցրել են մեր երկրագործին վերին աստիճանի աղքատութեան, այնպիսի աղքատութեան, որ խեղճը սերմնացու և նոյն իսկ ուտելու հաց անգամ չունի։ Երկրագործի այս տեսակ դրութիւնը անտանելի և ցաւալի է, իսկ աւելի ցաւալին այն է, որ նրա այս դրութիւնից օգուտ են քաղում վաշխառու «ղազանճիներ» ու «ղաթըրճիներ» և նոյն իսկ «պատաւոր» տիտղոս ունեցող և իրանց «վաճառական» անունով զրոշմող անձնաւորութիւններ, որոնց թիւը թէ Ախալքալաքում և թէ նրա գաւառում քիչ չէ և որոնք զուրկ լինելով միանգամայն մարդկային բոլոր բարի զգացումներից, միայն իրանց մանէթների թիւը աւելացնելու և իրանց զէշէֆտական զգացումներին բաւականութիւն տալու համար «օր ցերեկով», ամենքի աչքի առաջ, ինչպէս ասում են, կողոպտում են խեղճ երկրագործին և ահա նրանք, այդ երկրագործի արիւնը ծծող պարազիտները այսօր իսկ առնում են, այսինքն գնում են, խեղճ գիւղացուց նրա դեռ ևս չը ցանած անգամ այս տարվայ բոյսը, վճարելով նրան կանխիկ մի սօմար (18—20 պուդ) ցորենի գին 6 ր., իսկ նոյնքան գարու—3 ր. և պարտաւորեցնելով նրան մի և նոյն ժամանակ տուած գումարից 6—10 անգամ աւելի գումարի տուգանքներով այն դէպքում, եթէ նա «առաջիկայ կալին վրա չը յանձնէ ծախած հացահատիկը»։ Ահա թէ ինչ տեսակ ճիրանների է մատնված մեր երկրագործների մի ստուար մասը։ Գաւառի բոլոր վաշխառուները սովորական կերպով տարեկան հարիւրին 20-ից մինչև 40% են առնում, բայց վերոյիշեալ ձևով հացաբոյսը առնելը %-ի բոլոր նորմաներից դուրս է, որովհետև Ախալքալաքում և նրա գաւառում մի սօմար ցորենի գնի մինիմումը 13—15 ռուբլի է, իսկ գարինը 8—10 ռուբլի է։ Եւ ահա այս է պատճառը, որ «աւելուկ-բանջարին կարօտ երէկվայ զաղանճին ու զաթրճին, խաչիկն ու պիճիկը, պատաւորն ու տոհմականը այսօր նշով փլաւին էլ վռնկու պոչ են դնում»։ Այս տեսակ պարազիտների շնորհով օրից օր աղքատացող երկրագործը մի և նոյն ժամանակ հետզհետէ բարոյապէս էլ ընկնում է։ Թէ ո՞վ պէտք է լինի խեղճ երկրագործի պաշտպանը դարշելի վաշխառուների այս տեսակ կեղեքումների դէմ և թէ ինչ տեսակ միջոցներով պէտք է լինի այդ պաշտպանութիւնը, ես անկարող եմ և նոյն իսկ իմ ոյժերից բարձր եմ համարում այդ մասին պատասխան տալը. ես միայն մի կարծիք կը յայտնեմ, այն է, որ միայն կառավարութեան խիստ դատապարտող օրէնքը կարող է կատարելապէս ազատ պահել խեղճ երկրագործին վաշխառու պարազիտների ճիրաններից։

Երեք տարի էր արդէն, որ Ախալցխայի և Ախալքալաքի մէջ գտնվող Կուր գետի վրա չինված կամուրջի վտանգաւոր լինելու պատճառով փոստը մեզանում ստացվում էր Ալէքսանդրապօլի վրայով, այժմ նորից սկսվեց կանոնաւոր հաղորդակցութիւն Ախալցխայի վրայով և անցեալ շաբաթվանից փոստը սկսվեց Ախալցխայով ըստացվել և ուղարկվել։

Քաղաքիս հասարակութեան մէջ զանազան լուրեր են պատում տեղիս Ս. Խաչ եկեղեցու սարկաւագի եկեղեցում արած ղեղծումների մասին։ Բոլոր լուրերը այն միտքն ունեն որպէս թէ սարկաւագը «կուլ է տալիս» եկեղեցու զանազան արդիւնքները։ Թէ որքան ճիշդ է այդ բոլորը, ես կաշխատեմ ճիշդ տեղեկութիւններ ունենալ, իսկ առայժմ այսքանը կասեմ, որ եկեղեցու երեցփոխը սարկաւագի արած ղեղծումների մասին գրաւոր կերպով յայտնել է տեղական գործակալին և նրանից անօրէնութիւն է խնդրել, բայց գործակալը ցանկանալով պաշտպանել սարկաւագին, որը իր համար ժողովուրդ է որսում, ներկայացրել է կամ պէտք է ներկայացնէ երեցփոխի յայտարարութիւնը թեմական առաջնորդին։ Ինչ և իցէ, ցանկալի է, որ քննութիւն լինի այդ մասին, որպէս զի ժողովուրդը սրանից նրանից առնելով՝ միամտաբար չը մեղադրէ դուցէ անմեղ սարկաւագին։

Վերջապէս Ախալքալաքում առաջիկայ սեպտեմբերից բացվում է քաղաքային ուսումնարանը, որի շինութիւնը դեռ 1887 թ-ին աւարտվեց։ Ցառաջադիմութիւն է սա և այդ պատճառով չէ կարելի չուրախանալ սրա վրա։

Ծայրահեղ բարեկարգութեան է հասել մեր քաղաքը, ամեն բան տակասյով է ծախվում, ամեն բանի վրա, նոյն իսկ թանաքի և զմուռի վրա տակա է նշանակված։ Ախալքալաքի այս տեսակ բարեկարգութեամբը կարող են զմայլել և միւս բոլոր քաղաքները, նոյն իսկ և Թիֆլիսը, որոնք միայն կենսական պիտոյքների համար տակա ունեն։ Մեր վաճառականների առևտուրն էլ հեշտացաւ այդ տակասյի շնորհով, որովհետև ամեն մարդ առևտուր անելիս տակասյի թերթը ձեռին կունենայ և բոլորովին չի խոսի իրան հարկաւոր իրեղէնի գնի համար, այլ միայն կը հրամայէ յանձնել իրան այդպիսին և յետոյ որոնելով թերթի վրա գինը՝ կը վճարէ այդպիսին։ Այլ ևս սուտ երդումներ չեն հարկաւորվի վաճառականին անելու։ Ուղիղ որ լաւ բան է այդ տակասն, եթէ միայն այդ կարգադրութիւնը կարողանայ օրէնքի պաշտպանութիւնը վայելել, որ շատ հաւանական չէ։

Ա.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 27-ին

Մարտի 26-ին, առաւօտեան ժամի 11-ին, քաղաքիս կլուբի դահլիճում կայացաւ բժիշկ Լեոն Տիգրանեանցի հայերէն դասախօսութիւնը—«հարինքը սառը ջրով բժշկելու» մասին։ Ունկնդիրները շատ քիչ էին. նիւթը հետաքրքրական և բժշկութեան ձեր միանգամայն տեղացիների աւանդական սովորութեանց ներհակը։ Տեղ տեղ պ. դասախօսը հանաքի ձևով շատ տեղին նետեր էր արձակում դէպի ընիկ պառաւները, որոնց անհաշտ թշնամի իրան յայտարարեց։ Պ. դասախօս բժիշկը արժանացաւ միահամուռ ու երկարատև ծափահարութեան։ Վերջում ունկնդիրներին ցոյց տուեց խոշորացոյցի տակ պատրաստ դրած բակտէրիաներ կամ «գծորդներ», ինչպէս ինքն անուանում էր։ Ընդհանրապէս պէտք է շնորհակալ լինենք պ. բժիշկ Տիգրանեանցին այն հոգատարութիւնների համար, որոնց շնորհիւ այս տարի արժանանում ենք հրապարակային մի քանի դասախօսութիւններ լսել։

Ճշմարիտ որ շատ անախորժ և բաւական աչքի ընկնող անյարմարութիւն է դասախօսութեան դահլիճում ունկնդիր տիկինների և օրիորդների առջևն գլխարկներով նստելը. ետևի նստողներին բաւական արգելք են լինում։ Մի քանիսները նստած էին գլխարկները վերցրած և երանի թէ միւսներն էլ այսուհետև այնպէս անեն. դրանով թէ առաւել յարգանք ցոյց տուած կը լինեն այն ինքն ըստ ինքեան ամենապատկառելի հանդիսին, թէ խուսափած իրանցից ետև նստած անձնաւորութիւններին անյարմարութիւն պատճառելուց և թէ առաւել անուշ ու լաւ տպաւորութիւն արած կը լինեն տղամարդկանց վրա։

Լսում ենք որ Երևանի թեմական դպրանոցի ուսուցչական խումբը խնդրագրով դիմել է Վեհափառ Կաթողիկոսին իրանց նիւթական վիճակը յայտնելով, խնդրելու որ հրամայէ խափանել այն 3% ռոճիկներից գեղջելի տուրքը։ Եւ դրականապէս հաւատացնում են որ շուտով Վեհափառը, ըստ իր նախապէս խոստման, այդ ցանկալի հրամանն արձակելու է։

Արդէն տեղիս փոխանորդ Սուքիաս եպիսկոպոսը հրամայել է եկեղեցիներում պատգամաւորներ ընտրել թեմական դպրանոցի համար նոր հոգաբարձուներ ընտրելու նպատակով։ Չենք հասկանում ինչու, այս անգամ, հակառակ սովորականին, հրամայած է Պողոս-Պետրոս եկեղեցուց (որ ամենաբազմաձուկն է) 20 պատգամաւոր, Ս. Սարգսից 15 և մնացածներից 10-ական ընտրել։ Ինքնին պարզ է, որքան շատ, այնքան լաւ, բայց ոչ Երևանում, ուր գրեթէ մարդ չը կայ։

Լսում ենք, որ հայ ուսուցչական դասակարգի մէջ տրտունջ է բարձրանում «Արարատ» ամսագրի հարկատուութեան պատճառով։ Ցուսանք որ այնպիսի իրաւացի անախորժութիւնների պատճառ դարձողներն իրանք՝ իրանց արածի վրա զղջալով՝ յետ կը վերցնեն այդ հարկապահանջական հրամանը։ Ինչքան քար կայ՝ խեղճ ուսուցչի գլխին է դալի։ «Ուտեմ են, դմփեմ ես»—ասում է առածը։

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 30-ին մարտի

Շուշում քաղաքային ինքնավարութիւն չը լինելու պատճառով, քաղաքային գործերը կառավարում են գլխաւորապէս մի քանի աղաներ, և քաղաքը կատարեալ անշարժութեան մէջ լինելով, այդ աղաների գործունէութիւնը ամփոփվում է միայն հարկահանութեան մէջ։ Դրանք իւրաքանչիւր տարի պարտաւոր են ընակիչներից, ամեն մէկից իր կարողութեան համեմատ՝ հարկ ժողովել։ Բայց այդտեղ մեծ դեր է խաղում այդ հասարակութիւնից ընտրված աղաների կամքը, խղճմտանքը և արդարութիւնը.... Շատ անգամ դրանք խեղդում են խղճմտանքը, ոտնակոխ են անում արդարութիւնը և հանդէս դնում իրանց կամքը և խաթրը։ Շատ անգամ նրանք խաթրի համար, հարուստի հարկը թեթևացնում են և նրա ծանրութիւնը դնում աղքատ չքաւորի բաժնի վրա, ոչնչի տեղ դնելով ոչ վերջիններիս արտունջը, ոչ բողոքը։ Շատ անգամ օրվայ հացի կարօտ մարդը ստիպված է լինում աւելի հարկ վճարել, քան թէ հարուստ աղան։ Ահա մի կենդանի օրինակ. մենք Շուշում եղած ժամանակ տարեկան հարկ էինք վճարում 4 ր. 50 կոպ.։ Ահա տասն և եօթ տարի է, որ Շուշուց ամբողջ ընտանիքով տեղափոխված լինելով Թիֆլիս, այդ հարկը բարձրացաւ մինչև 6 ր., որը վճարում էինք երեք եղբայրներս։ Բայց չը նայելով որ արդէն չորս տարի է, որ մեծ եղբայրս վախճանվել է, հօրս մահից յետոյ, այնու ամենայնիւ այդ վախճանված մարդու բաժին հարկը ամեն տարի չարունակ առնում են մեզանից, այսինքն երկու եղբայրներից, ուշադրութիւն չը դարձնելով որ դրա դէմ շատ անգամ ես բողոքած եմ. և դրանով չը բաւականանալով, մեր վճարելի հարկը բարձրացրին մինչև 11 ռուբլի։

Երկու, հազիւ իրանց օրվայ հացը ձեռք բերող դրաչարներից Շուշու անխիղճ աղաները տարեկան վերցնում են 11 ռուբլի հարկ, մի գումար, որը Շուշու ոչ մի հաստատուն աղա չէ վճարում։ Գուցէ Շուշու հարկահան պարոնները կարծում են թէ մենք Թիֆլիսի փողոցներից ոսկի ենք ժողովում.... Բացի այդ, տարեկան 3 ռուբլի մեզանից վերցնում են յօգուտ Շուշու բէալական երեք-դասեան դպրոցի, որը եթէ միջին թւով Շուշու 20 հազար բնակիչների վրա բաժանենք, կը ստացվի 60 հազար ռուբլի, իսկ Շուշու չորս տարվայ հանդուցեալ բնակիչների բաժինն էլ հաշուելով, եթէ նրանք ամեն վախճանված մարդու հարկն էլ առնում են, աւելի շատ էլ կը ստացվի։ Բայց արդեօք այդ գումարի ո՞ր մասը ծախսվում է յիշեալ դպրոցի վրա....

Որովհետև այդ անկանոնութիւնները և ապօրինի վարմունքը կատարում են հասարակութիւնից ընտրված և հասարակութեան գործերը ղեկավարող անձնաւորութիւններ, ուստի ես վճռեցի հրապարակով բողոքել անկանոնութեան դէմ մամուլի միջոցով։

Սարգիս Նաղարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին տարիների ընթացքում Թիֆլիսում շուտ-շուտ են սկսել կրկնվել այսպէս կոչված «դոկտորական պրոցէսները», որոնք այնքան «պրոցէսների» մէջ անմիջապէս խառն մարդկանց պատիւը չեն վերականգնում, որքան հրապարակ են դուրս բերում և հասարակութեան ցոյց տալիս մեր քաղաքի բժիշկների անբարեխղճութիւնը, և եթէ կարելի է ասել, սև նախանձը։ Այդպիսի մի «դոկտորական պրոցէս» վերջին օրերում քննվում էր Թիֆլիսի հաշտարար դատարաններից մինում՝ համաձայն բժիշկ Կորսնայի գանգատի, որ նա տուել էլ բժիշկ Բաբովի վրա։ Երկար ու բարակ առարկութիւններ, վիճաբանութիւններ, բաղմաթիւ վկաներ, աղմուկ,—և վերջն էլ երկու կողմի համաձայնութեամբ մի վճիռ, որի զօրութեամբ գործը յանձնվում է միջնորդ դատարանին։ Զարմանալի է, որ այդ մասին մի փոքր վաղ չը մտածեցին մեր բժիշկները, և դատարանում բաւական անախորժ բացատրութիւններ ունենալուց յետոյ միայն խելքի եկան և վճռեցին գործը յանձնել նոյն իսկ բժիշկներից բաղկացած միջնորդ դատարանին։ Թիֆլիսում կայ բժշկական ընկերութիւն, Թիֆլիսում ապրում են բազմաթիւ բժիշկներ,—և միթէ դրանք չեն կարող այդ տեսակ դժգոհութիւններին բժշկական միջնորդ դատարանով վերջ տալ։ Բայց, ի հարկէ, լաւ է ուշ քան երբէք։

—

Նորերումս հասաւ ԹԻՖԼԻՍ մի ամերիկացի ատամնաբոյժ, դոկտոր Ուալլակ, որը աւարտել է իր ուսումը Ամերիկայի Բալտիմոր քաղաքի բժշկական բաժնում ատամնաբոյժի ատիճանով, ապա երկար ժամանակ Փարիզի ատամնաբուժական դպրոցում է ծառայել և վերջապէս Դօրպատի համալսարանում հարցաքննութիւն տալով, իրաւունք է ստացել Ռուսաստանում ատամնաբոյժի անունը կրելու և ատամնաբուժութիւն անելու։ Այժմ պ. Ուալլակ ապրում է Թիֆլիսում և ընդունում է հիւանդներին Սօլոլակում, աւագ-քահանայ Օրբելու տանը։

—

Մարտի 29-ին, չորեքշաբթի օրը, պ. պ. Լասալի և Շարլէի օպէրէտային խումբը կրկին մի նոր օպէրէտ ներկայացրեց Թիֆլիսի թատրոնում. դա Օֆընբախի «Տամբուր-մաժօրի աղջիկը» անունով օպէրէտն է, որը առաջին անգամ ներկայացվեց Փարիզում 1879 թ-ին և այնտեղ մեծ աջողութիւն ունեցաւ։ Այս անգամ ներկայացման մասնակցում էր ամբողջ խումբը, բայց ամենից շատ իրանց չնորհալի խաղով իրանց վրա ուշադրութիւն էին դարձնում՝ տիկիններ Լասալ և Գրետո և պ.պ. Լասալ և Շարլէ։ Օպէրէտի վերջին (չորրորդ) գործողութիւնը, որտեղ ներկայացվում է Ֆրանսիական զօրքի մուտքը Իտալիայի Միլան քաղաքի մէջ, 1800 թ-ին, գրաւեց հանդիսականներին իր չքեղութեամբ։ Մենք աւելի և աւելի ենք համոզվում, որ պ. Շարլէ աննման կօմիկ է, իսկ տիկին Լասալ և պ. Լասալ ապացուցին մեզ

մարտի 29-ի ներկայացման ժամանակ, որ օպերէտային դերասաններ լինելով հանդերձ՝ նրանք ունեն արտակարգ դրամատիկական տաղանդ էլ. երկրորդ գործողութեան այն տեսիլը, որտեղ հայրը գտնում է իր աղջկան, պարոն և տիկին Լասալ անցկացրին ճշմարիտ սրտաշարժ կերպով։ Թատրոնը կատարելապէս լի էր։

—

ՄՈՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են, որ մարտի 16-ին այդտեղ կայացաւ տիկին Տէրեանի և նրա եղբօր, յայտնի պիանիստ-կոմպոզիտօր պ. Կօրգանովի կոնցէրտը։ Տիկին Տէրեան, որը Պետերբուրգի իտալական օպէրայումն էր երգում, մեծ աջողութիւն ունեցաւ Մոսկվայում տուած իր կոնցէրտում։ Նա ստացաւ մի ծաղկեայ փունջ մի քանի երիտասարդների կողմից և մի այլ փունջ ուսանողութիւնից։ Բացի դրանից Մոսկվայի հայ և ռուս հասարակութեան կողմից մատուցվեց տիկնոջ մի չքեղ բրաչէտ։ Պ. Կօրգանով նմանապէս շատ լաւ ընդունելութիւն գտաւ Մոսկվայի հայ հասարակութեան կողմից։

—

Լոնդոնից մեզ գրում են հետեւեալը. «Այս օրերս Լոնդոնի եղեռնական դատարանի հարցաքննիչներ մին գնալով «Հայաստան» լրագրի խմբագրատունը, տեսեցիներից տեղեկութիւններ առած է այդ լրագրի խմբագիրների, պ.պ. Պրուսալիի և Սուազլիի մասին և «Հայաստանի» մէկ թերթն առած տարած է իր հետ։ Այս մասին պ. Բրայս Հասարակային Խորհրդարանին մէջ հարցում ուղղեց կառավարութեան, որը պատասխանեց թէ Օսմանեան դեսպանը խնդրած էր արգիլել այդ լրագրի հրատարակութիւնն և պատասխանուեցաւ թէ օրէնքը չը ներեր անել այդ. բայց մի և նոյն ժամանակ անգլիական ոստիկանութիւնը ուղած է տեղեկանալ թէ այդ «Հայաստան» անուն լրագիր ուր կը հրատարակուի»։

—

ԹԻՖԼԻՍԻ փոստատան շինութեան մէջ դետեղվում են այժմ թէ փոստային և թէ հեռագրական բաժանմունքները։ Փոստատան շինութիւնը այդ պատճառով մեծ փոփոխութիւնների և վերաշինութեան ենթարկվեց. շինութեան երկրորդ յարկը ամբողջապէս յատկացրած է հեռագրատանը, իսկ ստորին յարկը փոստատանը։ Բայց մի և նոյն ժամանակ սաստիկ նեղուածք է զգացվում ստորին յարկում և հասարակութեան յարմարութեան մասին ամենևին չեն մտածել։ Օրինակ այն սենեակը, որը յատկացրած է նամակաբերներին և որտեղ ամեն օր հարիւրաւոր մարդիկ են գալիս նամակներ ստանալու, մի ողորմելի փոքրիկ սենեակ է, որտեղ հազիւ կարող են տեղաւորվել 10 հոգի նամակաբերներ, ուր մնաց թէ հասարակութիւնը կարողանայ մտնել յիշեալ սենեակը։ Եւ հասարակութիւնը ստիպված է մընալ դրսում, խմբվել ցուրտ անցքում սենեակի դրան առջև։ Մենք կարծում ենք, որ հասարակութիւնը իրաւունք կունենար յուսալ որ փոստային-հեռագրական վարչութիւնը փոքր ինչ հոգար և հասարակութեան յարմարութեան մասին։ Շինութեան մէջ դեռ ևս կան բնակարաններ, որտեղ կենում են փոստային ծառայողները. սրանք, մեր կարծիքով, կարող էին ուրիշ տները տեղափոխվել, իսկ փոստային-հեռագրական շինութիւնը պէտք է իսկապէս ամբողջապէս յատկացվէր փոստային-հեռագրական գործին և ամբողջապէս ծառայէր հասարակութեան յարմարութեանը։

—

Կ. Պոլսից մեզ գրում են, որ Ռուսումնական խորհուրդը դիմել է Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանին, խնդրելով նրան մի տեղեկագիր պատրաստել «Ազգային Մատենադարանը» կարգի բերելու համար։

—

Փարիզի «La Géographie» լրագրի վերջին համարներից մէկում տպած է մի թղթակցութիւն, որը կրում է «Հայաստանի իսկական դրութիւնը» վերնագիրը, և խօսում է այդ երկրի ներքին դրութեան, և հանգամանքների մասին։

—

Ցայտնի է, որ մինչև այժմ գոյութիւն ունէին նահանգական ստատիստիական կոմիտեներ։ Այժմ, պետական խորհրդի բարձրագոյն հաստատված կարծիքով, Թիֆլիսի, Երևանի, Գանձակի, Բաքուի և Քութայիսի նահանգների նահանգական ստատիստիական մասնաժողովները ոչնչացրած են, և ստատիստիական տեղեկութիւնների հաւաքելն ու հրատարակելը այժմեանից տրվում է Անդրկովկասեան ստատիստիական կոմիտեի ձեռքը, որը կազմակերպված է Թիֆլիսում։

—

Պետերբուրգի լրագիրները լսել են, որ Բուխարայի էմիրը իր մեծ որդուն ուղարկելու է Ռուսաստան՝ ուսում առնելու համար։

—

Վերջին խաղարկութեան 75 հազար գումարը, ինչպէս հաղորդում է «Кр. Вѣстникъ» լրագիրը, տարել է Սիմֆերոպոլի մի հիւրանոցի ծառան, որը անկասկած շուտով ծառայութիւնը կը թողնի, որպէս զի ինքը ծառաներ ունենայ։

—

Կիրակի, ապրիլի 1-ին, (առաւօտեան) Թիֆլիսի դումայի դահլիճում նշանակված է Թիֆլիսի կրեդիտային ընկերութեան ժողով։ Այդ ժողովում պէտք է հաստատվի 1888 թուի հաշիւը, և 1889 թուի համար կազմած նախահաշիւը։ Ապա տեղի կունենայ հերթով դուրս եկող պ. Գարսօեվի փոխարէն մի դիրեկտորի, այնուհետև դանձապահի, վերաստուգողական և վերաղիտողական յանձնաժողովների անդամների ընտրութիւնը։

—

Մեզ հաղորդած տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսում գոյութիւն ունեցող զանազան փոխատու կասսաները բաւական հարստահարող կերպով են գործում։ Բացի այն, որ ահագին տոկոս են վերցնում, այլ և այնպիսի չնչին գին են տալիս իրանց մօտ գրաւ դրած թանգագին իրերին, որ ամեն հնարք գործ դնելով գրաւը իրանց ձեռքում պահելու, նրանք ահագին շահ են ունենում, թէ տոկոսներից և թէ գրաւներից, որ նրանք կրկնապատիկ և եռապատիկ գներով վաճառում են։ Առհասարակ, ինչպէս երևում է, վաշխառուների դասակարգը շատ նեղ դրութեան մէջ է դնում այն բազմաթիւ և մանր ծառայողներին, աստիճանաւորներին, չքաւոր ընտանիքներին և անօգնական կանանց, որոնք մի անգամ արդէն այդ վաշխառուների ձեռքն ընկնելով, այլ ևս չեն կարողանում նրանցից ազատվել, առանց մեծ զրկանքներ կրելու։ Այդ վաշխառութեանը շատ է նպաստում այն հանգամանքը, որ մեր քաղաքում չը կան փոքր ի շատէ մատչելի փոխատու արկղներ։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի հայ դերասանները մտադիր են խմբովին Զատկից յետոյ մի շարք ներկայացումներ տալ, որոնցից գոյացած արդիւնքով բեմի սպասաւորները յոյս ունեն մի փոքր «ծանրացնել իրանց գրպանները», մինչև որ կը հասնի այն երջանիկ օրը, երբ Թիֆլիսում կը կազմակերպվի մշտական խումբ՝ Դրամատիական ակումբի ղեկավարութեան ներքոյ։ Այդ երջանիկ օրը, օպտիմիստների կարծիքով, այս տարվայ սեպտեմբերին կը լինի, երբ Դրամատիական ակումբը իր մի քանի բուբլի և մի քանի կոպէկներով երաղում է մշտական խումբ կազմակերպել, և Պոլսից դերասաններ ու դերասանուհիներ հրաւիրել։

—

Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը, ինչպէս լսում ենք, մտադիր է Զատկից յետոյ սիրողների մի ներկայացում տալ յօգուտ այդ ընկերութեան։ Անկասկածելի է, որ այդ ներկայացումից ընկերութիւնը չոչափելի արդիւնք կունենայ, քանի որ մեր տիկինները քաջ են ներկայացումներ, կոնցերտներ կազմելու և տոմսակներ վաճառել տալու մէջ։ Զարմանալի է միայն, թէ ինչու մեր տիկինները իրանց քաջութիւնը գործ չը դրեցին այս մեծ պասի ընթացքում յօգուտ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան հրապարակական դասախօսութիւններ կազմել տալու համար, քանի որ կանանց խնդիրը ամենամեծ ոյժն է մեր սառած ինտելիգէնտներին մի փոքր ցնցելու համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Կ. Պոլսից մեզ ուղարկված է հետեւեալ տեղեկութիւնը, առնելով այնտեղի լրագիրներից. «Պէյքօզի մէջ յոյն և հայ հասարակութեանց համար միակ գերեզմանատուն մը կայ։ Հինգշաբթի օրը տեղւոյն գայմագամը կը հրամայէ գաղթականներուն ճանրայ մը բանալ այդ գերեզմանատան մէջէն։ Իրենց մեռելոց բնակարանի այս բըռնաբարութենէն վնասեալ երկու հասարակութիւնք կը դիմեն գայմագամին որ բնաւ կարեորութիւն չի տար անոնց բողոքին և աշխատութիւններն յառաջ վարել կուտայ։ Գիւղին կիները որք գերեզմանատուն գնացած էին, տեսնելով որ գործաւորք ծով կը նետեն իրենց մեռելոց ոսկրոտին զորս հողէն կը հանէին, կը հաւաքեն գայնս և գայմագամին կը տանին կրկնելով իրենց բողոքը, սակայն գայմագամն, փոխանակ զոհացում տալու, բողոքող կիները բանտարկել կուտայ։ Որովհետև ճամբուն պեղումն առաջ կը տարուէր միշտ, ուրիշ կանայք ևս կը կրկնեն ցոյցը, այն ատիճան որ գերեզմաններուն վրայ կը պառկին և իրենց մարմնով կը ծածկեն գայնս, գերեզմանաց բռնաբարումն արգիլելու համար։ Այս տեսարան որ սրտաճմլիկ երևոյթ մը ունէր, վերջապէս հարկադրեց գայմագամն առժամապէս դադրեցուցնել աշխատութիւնները և բանտարկեալ կիներն արձակել։ Հայ և Յոյն հասարակութիւնք իրենց Պատրիարքարանաց դիմած լինելով, Պէյքօզի գայմագամն ի դատ պիտի կոչուի ձեռնհաս դատարանաց առջև»։

Հաղորդելով այդ տեղեկութիւնը, նամակագիրը աւելացնում է, որ Հայոց Պատրիարքը այդ խնդրի առիթով Կ. Պոլսի քաղաքապետին դիմել է մի առանձին գրութեամբ։

Էնկիւրիայի երկաթուղու շինութեան հարցի մասին Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք հետեւեալը. «Վիէննայի դրամական ակումբներուն մէջ հաստատապէս կըսուի եղեր թէ Պ. Քառալա Էնկիւրիի երկաթուղոյ շինութեան մասին իւր յանձնառութիւնները չը պիտի կարենայ գործադրել, որովհետև Քոնդուտա տ'Էսքոնթի ծանուցեալ վիճակն բաւական սարսած է Տէօյչ Պանք, Լէնտեր Պանք և այն դրամատուններն որք նոյն գծի շինութեան պիտի ծառայէին։ Օր աւուր աւելի հաստատութիւն կը դտնեն այն զրոյցներ թէ Էնկիւրիի գծին շինութեան պայմանագիրը պիտի փոխանցուի Օսմ. Կայս. Պանքային և սորա կուսակից ուրիշ մէկ քանի պանքներու և մանաւանդ կըսուի թէ այս գործին մէջ Քրէտի Լիոնէ դրամատունն ևս պիտի աջակցի Օսմ. Կայս. Պանքային։ Վիէննայի ելմտական ակմբոց մէջ միանգամայն կը հաւաստուի եղեր թէ այդ երկու դրամատանց դրամական ոյժերն Էնկիւրիի երկաթուղոյ շինութենէն աւելի մեծ գործերու ևս բաւական են, որով եթէ այդ գործ իրենց փոխանցուի աւելի շուտ և աւելի նպաստաւոր կերպիւ պիտի շինուի»։

Արտասահմանի մի հայ լրագրում կարդում ենք. «Մեծ Եպարքոս Քեամիլ փաշան երկար ժամանակէ ի վեր սաստիկ հպկառակորդ կը ներկայանար Յակոբ փաշային։ Սուլթանը ուզելով համաձայնութեան մէջ դնել այդ երկու բարձր պաշտօնատարներ, երկուքն ալ իր մօտ կանչելով հաշտեցուցեր է իրար հետ։ Քեամիլ փաշան և Յակոբ փաշան հնազանդելով Սուլթանին, նորա առջև իրար հետ պատուեր և հաշտուեր են։ Բայց մինթէ բնաւորութիւնների և սկզբունքների տարբերութիւնը կրնայ համբոյրով վերջանալ»։

Կ. Պոլսի ազգային Խառն ժողովը իր վերջին նիստերից մէկում որոշել է շրջաբերական ուղղել այնտեղի բոլոր եկեղեցիներին, ծանուցանելով որ բացի իւրաքանչիւր եկեղեցու քարոզչից, ուրիշ որ և է եկեղեցական չէ կարող քարոզ խօսել եկեղեցու մէջ, առանց իր ձեռքում ունենալու պատրիարքական հրաման։

Պէտք է նկատել, որ այդպիսի կարգադրութիւն անելու գլխաւոր պատճառը այն է, որ վերջին ժամանակներս Մուրադեան Մելքիսեդեկ եպիսկոպոսը սկսած է.եղել քարոզներ խօսել Կ. Պոլսի եկեղեցիներում՝ հակառակ պատրիարքարանի թոյլտուութեան, իր այդ քարոզներով յարձակում գործելով պատրիարքի և ուրիշ մի քանի անձանց վրա։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 21 մարտի

Պոլսի համար դրական խնջոյքի մը հրաւէր կար, մարտ 19-ի կիրակի աւուր համար։ Ի նպաստ Ասիական ընկերութեան լսարան մը տեղի պիտի ունենար ի Բերա, յունական ընկերութեան մը սրահին մէջ։ Օրուան ատենաբանները պիտի ըլլային Ֆրանսացի մը, պ. Զերազ, և պ. Ադամեան. առաջինը պիտի խօսէր գիտական նիւթի մը վրայ, երկրորդը պիտի պատմէր իր ապաւորութիւններն ի Կովկաս, իսկ երրորդը պիտի ներկայացնէր մի քանի գեղեցիկ տեսարաններ։ Կիրակի օր կէս օրէն 3 ժամ վերջ հոծ բազմութիւնը զբաւած էր Սիլլոդոսի սրահը, բազմութիւն մը որ զրական լեզուով այստեղ ընտրեալ կը կոչենք։ Պոլսի գեղեցիկ, ընչաւէտ, ուսեալ կիներն, երիտասարդ զրագէտներն ու, ինչպէս այժմ կըսենք, գրագէտուհիներն, որոնց պարագլուխ է տիկին Սրբուհի Տիւսաբ, հանդիսին նախագահը, առևտրական դասի ներկայացուցիչներ, պետական ծառայութեան մէջ գտնուող հայերն, ամէնքն ալ անդ են։ Այդ բազմութիւնը որ Պոլսի զանազան կողմերէ եկած է, և այդ աւուր գարնանային գեղեցիկ օդովը բանտարգուած քարուկիր չէնքի մէջ, արդեօք նշանակ մը չէ թէ գեղեցիկ գրականութեան ճաշակն ըկած է և մեզ ալ ընտանի ըլլալ։

Ֆրանսացի ատենաբանը խօսեցաւ գիտական նիւթի մը վրայ. պ. Ադամեանի ձայնը մարած էր և կարող չեղաւ բան մը ըսել։ Գլխաւոր և միակ հրապոյրն էր պ. Զերազի ատենաբանութիւնը։ Պ. Զերազ երեք քառորդի չափ խօսեցաւ,—ոչինչ զրած էր—և այդքան միջոցի մէջ, խնդութիւն, յուզում, տրտմութիւն, ամէն ինչ տուաւ մեզ։ Գրական ընտիր լեզու մը, պարզ ու ճշդիւտ ոճ մը, զգածեալ ոգւով և խոհուն տրամաբանութեամբ այս ամէնը զանգուած ահա պ. Զերազի ատենաբանութեան նկարագիրն։ Ինչ որ ձեզ կը վերաբերի, անսահման հետաքրքրութեամբ կը լսուի Պոլսոյ ժողովուրդէն։ Կայ լրագրի մէջ յօդուած մը ձեզ վերաբերմամբ, ապահով եղէք որ ամէն ոք կը կարդայ, ամէն ոք անոր վրայ կը խօսի. ուրեմն դիւրին է ենթադրել թէ պ. Զերազի կենդանի նկարագրութիւններն ինչ ընդունելութիւն գտան։ Անընդհատ, որոտընդոստ ծափահարութիւններն ընդհանուր գոհանակութեան արտայայտիչ նշաններն էին։

Բայց թողունք այս գումարումը և յետադարձ ընթացքով խօսենք ուրիշ գումարումի մը մասին. հարկ է ըսել. մարտի 17-ի Ազգային Ժողովի գումարումն է այս։ Ցուզեալ, աղմկալից, տարաբաղդ նիստ մը։ Արդէն ըսած եմ թէ երեսփոխանները նիստերու ներկայ գտնուիլ չեն ուզեր, որպէս զի կարելի չըլլայ առաջնորդական խնդրին վրայ որոշում տալ մինչև որ Քաղաքական Ժողովը իր պաշտօնավարութեան շրջանը աւարտէ. ամիս մը մնաց այդ ժամանակին, համբերելու էր։ Այսու հանդերձ ներկայ գտնուողներու թուով ժողով կը բացուի, և որովհետև կենսական կարեորութիւն ունեցող հարցեր չը կան, հետևաբար հնարաւոր կըլլայ խօսել ու վճռել։ Այսպէս ալ եղաւ այս նիստին սկիզբն, խել մը հարցեր կային որոց համար որոշումներ տրուեցան, և երբ այդ խնդիրները վերջացան ու կարգն եկաւ օրակարգին, որոտումն սկսաւ։

Գանք օրակարգին։ Այն ինչ Ատենապետն օրակարգին անցաւ, ահա աջակողմը, էֆէնդիները խմբովին սկսան գոչել թէ օրինական թիւ չը կայ, մեծամասնութիւն չը կայ, ժողովը ընել կարելի չէ։ Ձախակողմն ապշեցաւ. ինչպէս, ատեան կը բացուի, որոշումներ կը տրուին, ցանձնաժողովներ կը կազմուին, ոչ ոք ձայն կը հանէ, իսկ երբ կարգը ուրիշ խնդիրներու կուգայ էֆէնդիները կը յեղափոխուին։ Դժբաղդաբար ձախակողմն ահագին ժխոր մը կը յարուցանէ. փոխանակ հանդարտութեամբ ջախջախելու աջակողմի փաստերն, աղմուկ, յուզում կը յարուցանեն։ Երկու ժամի մօտ խռովութիւնը կը շարունակէ. սակայն այս խնդրին մէջ չէզոք դիրք ունեցողները կը նկատեն թէ աջակողմը, էֆէնդիները, զուցէ իրաւունք մը ունեն. անդադար կաղաղակեն թէ՝ վանգ է, եթէ առանց օրինական թուի նիստը շարունակէ։ Այդ չէզոք դիրք ունեցողները դիտել կուտան թէ՝ Պատրիարքը ներկայ չէ. վանգի գուշակութիւն կայ. ով է պատասխանատուն ժողովքի համար։ Քաղ. Ժողովի ատենապետ Սիմոն պէյ կը յայտարարէ թէ՝ ինք պատասխանատուութիւն յանձն չառնէր, եթէ ժողովը նախորդ որոշում մը տայ, ու Սիմոն պէյ կը մեկնի. կը մեկնին նաև ուրիշներ։ Ցարակոյսները կը չատնան. արդեօք իրաւ բան մը կայ։ Վէճերը կը շարունակին քիչ մը ևս. ժողովի փակումին կէս ժամ կայ. ամէնքն հոգնած են, ի հարկէ, լռութիւնը կը տիրէ։ Այն ատեն Ստեփան բաշա Ասլանեան բեմը կելլէ և կը սկսի խօսել նախորդ Կրօն. Ժողովի, որու ատենապետն էր Հայրիկ, Պէշիկթաշի գերեզմանատունի խնդրին մէջ հետևած ուղղութեան ընդդէմ։ Մեռած խնդիրը վերստին յարոյց Ստեփան բաշա և եթէ այդ խնդրի մասին վէճերը շարունակուին, Աստուած գիտէ թէ ինչ հետևութիւններ կրնան առաջ գալ։ Հայրիկ հիւանդ ըլլալով

պատասխան տուող չը կար. սպասենք ապրիլի 21-ին։ Ցետոյ ուրիշ ատենաբան մը քննադատեց այդ կրօ. Ժողովի ուրիշ գործերն. և ժամը հասած ըլլալով մեկնեցանք, տխուր, դառնացեալ։

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզից գրում են, որ բուլանժէականները շատ վրդոված են, որ Բուլանժէ Բրիւսել է փախել։ Նրանք այդ համարում են մի զօրեղ հարուած իրանց գործի համար։ Բուլանժէի փախչելը տեղի է ունեցել գաղտնի կերպով. նոյն իսկ նրա կողմնակիցներից շատերը այդ չէին իմացել։ Բաղդախնդիր գեներալը փախչելիս չորերը և դէմքը միանգամայն փոխած է եղել։ Փարիզի հանրապետական լրագիրները այդ համարում են «կոմեդիանտի փախուստ», աւելացնելով, որ նրա երգը երգված է արդէն։

—Սոֆիայից հեռագրում են, որ պրինց Ֆերդինանդը աշխատում է համոզել Ստամբուլովին, վերակազմելու այժմեան մինիստրութիւնը։

—Բրիւսելից հեռագրում են. «Գեներալ Բուլանժէ այստեղ գալով, իր այցետոմսերը ուղարկեց մինիստրներին և քաղաքագլխին։ Մինիստրների խորհրդը վճռեց թոյլ չը տալ, որ Բելգիայի սահմաններում Բուլանժէի համար ագիտացիա լինի։»

—Աթէնքում այս օրերս տեղի ունեցած երկրաշարժի պատճառով տեղական ազդարնակութիւնը սարսափի մէջ է գտնվում։

—Բելգիական կառավարութիւնը հարց է ուղում յարուցանել Բուլանժէին Բելգիայից դուրս ուղարկելու մասին։

—Ինչպէս հեռագրում են Փարիզից, բուլանժէականների մէջ տարաձայնութիւններ են ըսկսվել։

—Փարիզից հեռագրում են, որ Բուլանժէի, Բոշֆորի և կոմս Դիլիոնի բնակարաններում խուզարկութիւններ կատարվեցան։ Վճռված է դատի ենթարկել նմանապէս Բոշֆորին և Դիլիոնին։ Բուլանժէ մեղադրվում է այն բանի համար, որ 1888 թվին դիտաւորութիւն ունէր յեղափոխութիւն գործել եղած կառավարութեան դէմ և Մօրֆի անարխիստի մօտ գտնված է այն անձանց ցուցակը, որոնք պէտք է այդ գործում գլխաւոր դերը խաղային։ Երբ Բուլանժէ Ֆլօկէի հետ ունեցած մենամարտից յետոյ վէրքեր ստանալով հիւանդացաւ, գործը յետաձգվեց 1890 թվին։ Դաւադիրները մտադրութիւն ունէին յանկարծակի յարձակվել Ելիսեան պալատի դէմ, նախապէս կտրելով հեռագրական և հեռախօսական բոլոր թելերը, որոնք կապում են պալատը մնացած քաղաքի հետ։ Ջորքի մէջ դաւադիրները կուսակիցներ ունէին։ Բուլանժէի դէպի Բէլգիա փախուստից մի քանի օր առաջ դաւադիրները դարձեալ մի ժողով կայացրին, խորհրդակցելով ձեռք առնելի միջոցների մասին՝ կարգադիր մասնաժողովի անդամների ձերբակալութեան դէպքում։ Կոմս Դիլիոնին յանձնված էր վարձել Ամստերդամում մի բնակարան Բուլանժէի համար։

—Շվեյցարական Բէրն կանտոնի ազգային խորհուրդը մի զեկուցում ներկայացրեց դաշնակցական խորհրդին շվեյցարական սահմանադրութեան վերաքննութեան մասին։

—Շվեյցարական հանրապետութիւնը, ինչպէս հաղորդում է հեռագիրը, դիմել է եւրոպական բոլոր պետութիւններին, առաջարկելով կազմել մի միջազգային կոնգրէս՝ գործարանական բանուորների աշխատանքի հարցը կանոնաւորելու համար։ Միջազգային ժողովի նպատակը պիտի լինի՞ դրաղվել հետեւեալ հարցերով. բարւոքել բանուորների կացութիւնը, արգելել կիրակեայ և գիշերային աշխատանքը, որոշել հասակը, որից առաջ անչափահաս բանուորին չը պէտք է թոյլատրվի բանել ֆաբրիկաներում, և վերջապէս սահմանափակել երեխաների և կանանց տչխատանքը գործարաններում և այլն։

—Սոֆիայից հեռագրում են, որ այնտեղ խոշոր անկարգութիւններ են տեղի ունենում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 մարտի։ Հրատարակված է պետական խորհրդի որոշումը. շաքարային գործարանից ստացվող ամբողջ ակցիզից անկախ, իւրաքանչիւր տարի ապրիլի առաջին կիսում կատարվում է ակցիզի սկզբնական հատուցումն։ Շաքարագործութիւնը սկսելուց առաջ վճարված ակցիզը մտցնվում է՝ յուլիսի 1-ին, սեպտեմբերի մէկին և դեկտեմբերի 1-ին. առաջին պայմանաժամում մտցնվում է ակցիզի $^1/_3$-ից ոչ պակաս, համաձայն սկզբնական վճարման, երկրորդ պայմանաժամին մտցնվում է մի գումար, որը առաջին պայմանաժամում վճարված գումարի՞ հետ միասին կազմում է գործարանից ստանալի ամբողջ ակցիզի $^2/_3$ մասը. երրորդ պայմանաժամում մտցնվում է ակցիզի մնացած $^1/_3$ մասը։ Իր ժամանակին չը վճարելու դէպքում իւրաքանչիւր ամիս 2% է աւելացնվում։ Վերոյիշեալ որոշումները գործադրել 1889—1890 թվին։—Բարձրագոյն հրամայված է՝ պակասեցնել Ս. Գէորգի 2-դ աստիճանի թոշակաւորները 15-ով և այս աստիճանի համար թոշակաւորներ նշանակել 10,000-ի փոխանակ 6,000 ր. մնացած 4,000 ռուբլու վրա աւելացնել 25 աղատ տեղեր Ս. Գէորգի 4-դ աստիճանի համար, որոնք չնորհվում են զինուորական քաջագործութիւնների համար, և որը կը կազմի 3,750 ր., իսկ 250 ր., մնացորդը միացնել 14,800 ր. գումարի հետ, որը տրվում է Ս. Աննայի չքաւորների թոշակաւորներին քսանամեայ անբիծ ծառայութեան համար։—Բարձրագոյն հրամայված է՝ անուանել ճանապարհների հաղորդակցութեան ինժենէրներ, առանց առանձին Բարձրագոյն թոյլտուութեան, ոչ միայն ճանապարհների հաղորդակցութեան ինժենէրների ինստիտուտում աւարտողներին, քաղաքացիական ինժենէրներին, բայց և նրանց հետ համահաւասար ճանապարհների հաղորդակցութեան վարչութեան ծառայութիւնը մտած զինուորական ինժենէրներին, ներքին գործերի մինիստրութեան քաղաքացիական ինժենէրներին, և նրանց, որոնք տեխնիական բարձրագոյն դպրոցներում ուսման ընթացքը աւարտել և իրաւունք են ստացել չինութիւններ կառուցանել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 մարտի։ Երէկ երեկոյեան վախճանվեց հաղորդակցութեան ճանապարհների մինիստր Պռուկէր։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 30 մարտի։ Մինիստրական ճգնաժամը շարունակվում է։ Գեներալ Ֆլօրէսկո հրաժարվեց յանձն առնել, նոր մինիստրութիւն կազմելը։ Ասասում են, որ թագաւորը նորից կը դիմել Կատարջիին։

ՀՌՕՄ, 30 մարտի։ Իտալական կառավարութիւնը վճռեց առ այժմ չը դրաւել Սամարա և Կարէնը։

ԲՈՒԽԱՐԷՍՏ, 30 մարտի։ Թագաւորը երկրորդ անդամ առաջարկեց Կատարջիին մինիստրութիւն կազմել. Կատարջի՝ մինիստր-նախագահ և ներքին գործերի մինիստր. Լագովարի՝ արտաքին մինիստր, գեներալ Մանու՝ զինուորական մինիստր։

ԿԱԼՈՒԴԱ, 31 մարտի։ Օկա գետի սառուցը հալվեց։

ՁԱՐԶՈՒ, 31 մարտի։ Աւգանիստանից հաղորդում են, որ Աբդուրահմանը թոյլատրեց աւգանական Ցուրքեստանի և Զարվիլադուայի բնակիչներին վերանորոգել առևտրական յարաբերութիւնները Բուխարայի հետ։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԷՄԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ կարգադրութեան համաձայն, ապրիլի 2-ին, Ծաղկազարդի կիրակի օրը, ժամը 12½-ին սուրբ պատարագից յետոյ, կատարվելու է Թիֆլիսի ՆՈՐԱՇԷՆ ս. Աստուածածին եկեղեցու Ծխական-եկեղեցական ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՐՊՐՈՑԻ Նոր հոգաբարձուների ընտրութիւնը։ Ուստի յիշեալ եկեղեցու մեծապատիւ Ծխականները սրանով հրաւիրվում են նշանակեալ օրը մասնակցելու ընտրութեանը, որ տեղի կունենայ նոյն դպրոցի դահլիճում։

Վերատեսուչ բարեկարգութեան Թիֆլիսի եկեղեցիների՝ Յովհաննէս քահանայ Մարտիրոսեանց։ 1—1

ՀՐԱՒԷՐ

ՎԱՂԸ, ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ԵՐԵԿՈՅԵԱՆ 7½ ԺԱՄԻՆ, (ԵՒ ՈՉ ԹԷ ԱՌԱՒՕՏԵԱՆ) ՔԱՂԱՔԱՑԻՆ ԴՈՒՄԱՑԻ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ Է՝ „ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ“ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ։ 1—1

ՀՈԳԵՒՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ համաձայն սրանով հրաւիրում եմ Կուկիայի ս. Աստուածածին ԹԱՆԴՈՅԵԱՆ եկեղեցու մեծապատիւ Ծխական ժողովրդին շընորհ բերել նոյն եկեղեցի ԿԻՐԱԿԻ (Ծաղկազարդի օրը), ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԸ 12½-ին, կատարելու ԹԱՆԴՈՅԵԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՑՓՈԽԻ ԵՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ս. պատարագից յետոյ։

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցիների Հայոց Հալաբարի՝ Աշոտ քահանայ Թէմուրազեանց։ 2—2

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—10—11 ժ. վիրաբուժական, (և ատամնացաւի), սիֆիլիսի և աչքի ց. բացի կիրակի։
ՐՈՒԴԿՕՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11¼—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի։
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքչաթի, ուրբաթ և կիւրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիւրակի։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5½—6½ ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրօտերապիա)։
ԲԵՆԿԼԵՎՍԿԻ—6½—7½ ժամ.
Հիւանդանոցումն է մանկաբարձուհիք Մօղեր և Երևանցեան։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ։

Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

БОЛЬШАЯ ПРЕДПРАЗДНИЧНАЯ

РАСПРОДАЖА

ՏՕՆԵՐԻՑ ԱՌԱՋ ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Կենտրոնական գալանտէրիական մագազինում Երևանեան հրապարակի վրա, տուն Զուբալովի, Սէմինարիայի և Սկուէրի դիմաց։

Ամեն տեսակ գալանտէրիական, մոդային և տան տնտեսութեան առարկաներ. Ձերմակեղէն, կօրսէտներ, ժէրսէ, զգեստներ, գուլպաներ (տղամարդկանց և կանանց)։ Ալբոմներ, նեսէսէրներ, կօսմէտիական միջոցներ, մէլխիօրի և բրօնզեայ իրեր, լամպաներ, ամանեղէններ, երեխաների խաղալիքներ և այլն։ 4—6

Abonnementseinladung au
die meist verbreitete deutsche Wochenschrift:

Das Echo

(Stimmen aus allen Parteien.)

Wochenschrift für Politik, Literatur, Kunst und Wissenschaft.

Das Echo bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Borgänge, welche sich in Deutschland und Auslande abspielen.

Das Echo ist kein Parteiblatt, sondern es läßt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen.

Das Echo widmet außerdem dem Leben der hohen Kreise eingehende Aufmerksamkeit.

Das Echo bring in jeder Nummer ein bis zwei abgeschlossene Novelletten, Erzählungen u. s. w. aus der Feder bewährter, zeitgenössischer Schriftsteller.

Das Echo bringt informierende Notizen, Kritiken und Leseproben aus den bedeutendsten Erscheinungen des internationalen Büchermarktes.

Das Echo betrachtet es insbesondere als seine Aufgabe, dem Leben und Treiben der Deutschen im Auslande die liebevollste Aufmerksamkeit zuzuwenden.

Das Echo will somit unsern Landsleuten im Auslande ein „Bote aus der Heimat" sein, deshalb ist auch sein Abonnementspreis ein sehr niedriger. Es versendet die Expedition in Berlin S. W. das Echo nach allen zum Weltposiverein gehörigen Ländern für 4 Mark 50 Pf. vierteljährlich und für 17 Mark ganzjährig, nach den Ländern und Gebieten außerhalb des Weltposivereins für 23 Mark ganzjährig.—Zahlungen geschehen am raschesten und sichersten durch Postanweisung oder durch Anweisung auf deutsche Banken.—Ebenso liefert jede deutsche Buchhandlung und Zeitungsagentur im Auslande das Echo zu den landesüblichen Preisen. Probenummern sind durch die letzteren zu beziehen oder auch direkt von

J. H. Schorer,
Verlag des Echo, Berlin S. W.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

(Պիանինօ)

Ամերիկական տեսակի, վարձով են տրվում և ծախվում են գործարանական գնով, Կոպի դաշնամուրի գործարանում, Միքայէլեան փողոց, № 132. 5—5

Дозволено цензурою, Тифлисъ 31 Марта 1889 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. кав.